ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2018թ. հոկտեմբեր16 N 124

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿԻ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ԱՆՎԱՆ Հ. 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N 123 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի Կոնֆիցիուսի ինստիտուտի տնօրինության հրավերը և Ս. Բարսեղյանի 2018 թվականի հոկտեմբերի 5-ի դիմումը՝ ***կարգադրում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի Ներսես Աշտարակեցու անվան հ. 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սուսաննա Բարսեղյանին 2018 թվականի հոկտեմբերի 20-ից 30-ը ներառյալ գործուղել Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն Կոնֆիցիուսի ինստիտուտի <<Բարձրագույն կրթական հաստատությունների ներկայացուցիչների և դպրոցների տնօրենների այց Չինաստան>> ամենամյա ծրագրին մասնակցելու համար :

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի Ներսես Աշտարակեցու անվան հ.1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել ուսումնական գծով փոխտնօրեն Թամարա Սիմոնյանի վրա:

3. Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն մեկնելու ֆինանսական ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի ժամանակավոր փոխարինող Անահիտ Սարգսյանի 2018 թվական հոկտեմբերի 8-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի Ներսես Աշտարակեցու անվան հ. 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սուսաննա Բարսեղյանին չվճարվող արձակուրդ տրամադրելու մասին>> N 123 կարգադրությունը:

Ժամանակավոր փոխարինող՝ ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ